Ադրբէջանի յեղաշրջումը զուգադիպեց Մայիս մէկի տօնին։ Երևանում և Հայաստանի միւս վայրերում հայ աշխատաւորութիւնը պատրաստւում էր առանձին հանդիսաւորութեամբ տօնելու աշխատաւորների միջազգային համերաշխութեան օրը։ Բոլշևիկները օգտուեցին դրանից և աշխատեցին մայիսեան տօնը վերածել ընդհանուր հակասովետական ապստամբութեան։ Երևանում այդ չյաջողուեց, բայց գաւառական մի շարք քաղաքներում նրանք ունեցան կարճատև յաջողութիւն։

Շարժումները զարգացան հետևեալ ձևով։ Երևանում Մայիսի մէկը տօնուեց աննախընթաց շքով։ Ամբողջ քաղաքը զարդարուած էր կարմիր դրօշակներով, գորգերով ու ծաղիկներով։ Վաղ առաւօտեանից փողոցները լեցուած էին խուռն բազմութիւններով։ Հրապարակներն ու Աբովեան պողոտան բռնուած էին արհեստակցական միութիւնների անդամներով, դրօշակներով ու նշաններով։ Կազմակերպուած թափօրին մասնակցում էին բոլոր հոսանքները։ Քրիստափորի, Ռոստոմի ու Զաւարեանի պատկերների կողքին դրուած էին և Լենինի ու Շահումեանի պատկերները։ Դաշնակցութեան նշանախօսքերին ու մակագրութիւններին զուգընթաց կային և բոլշևիկեան աղմկարար կարգախօսներ։ Զօրահանդէսից յետոյ Խորհրդարանի առջև տեղի ունեցաւ հրապարակային փառահեղ ժողով, ուր ճառեր արտասանեցին Խորհրդարանի նախագահ Ա. Սահակեանը, արտաքին գործերի նախարար Հ. Օհանջանեանը, վրաց սոց.–դեմոկրատ յայտնի գործիչ Ի. Ռամիշվիլին, Սեպուհը և ուրիշներ։ Ապա տեղի ունեցաւ Երևանի նոր կայարանի հանդիսաւոր բացումը, ուր նոյնպէս արտասանեցին բազմաթիւ ճառեր։ Օրւայ ճառախօսների գլխաւոր նիւթն էր կարմիր դոյն առած Ադրբէջանի վերջնագիրը, որ նոր էր ստացուած Երևանում և որով պահանջւում էր երեք օրւայ ընթացքում մաքրել Ղարաբաղն ու Զանգեզուրը հայկական ուժերից։ Այդ առթիւ ընդունուեց մի բանաձև, որի մէջ ժողովը «յայտնում էր իր բուռն զայրոյթը թուրք դիւղացիութեան և բանւորութեան անունը չահագործող դահիճներին, որոնք սովետական իշխանութեան և կոմունիզմի անունը օգտագործելով՝ շարունակում են նախորդ կառավարութեան արիւնոտ գործը։ Հայաստանի աշխատաւորութիւնը իր եղբայրական ձեռքն է մեկնում Ադրբէջանի աշխատաւորութեան և պահանջում է վերջ տալ արշաւանքին դէպի Ղարաբաղ և Զանգեզուր՝ թոյլ տալով, որ այդ գաւառների դիւղացիութիւնն ու բանւորութիւնը ինքը ազատորէն արտայայտէ իր կամքը։ Հայաստանի աշխատաւորութիւնը խորապէս հաւատալով, որ Ռուսաստանի խորհրդային իշխանութիւնը թոյլ չի տայ Ադրբէջանին յարձակողական քաղաքականութիւն՝ միևնոյն ժամանակ պահանջում է իր կառավարութիւնից անյոգնաբար պաշտպանել Հայաստանի և հայ աշխատաւորութեան ազատութիւնն ու անկախութիւնը և առաջարկում է արհեստակցական միութիւնների միութեան այս բանաձևը անմիջապէս յայտնել բոլոր երկրների աշխատաւորութեան և խորհրդարանների սոցիալիստական ֆրակցիաներին»։

Բանաձևը, որ առաջարկուած էր արհեստակցական միութիւնների կենտրոնական վարչութեան կողմից, դնում էր տարբերութիւն Խորհրդային Ռուսաստանի և Ադրբէջանի քաղաքականութեան միջև։ Թէև յետագայ դէպքերը ցոյց տուին, որ ո՛չ մի տարբերութիւն չկար։ Նա արտայայտում էր